



05 02 2019թ.

Երևանի քաղաքապետ՝
պարոն Հայկ Մարությանին

Հարգելի պարոն Մարության,

Փաստաբան Նելլի Մովսիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնելով, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը խոչընդոտել է իր մասնագիտական գործունեության իրականացմանը՝ արգելելով, որպես իր վստահորդի ներկայացուցիչ մասնակցելու հանձնաժողովի նիստին:

Այդ մասին փաստաբան Նելլի Մովսիսյանի կողմից Երևանի քաղաքապետարանի «Թեժ գիծ» հեռախոսահամարով հայտնված տեղեկությանն ի պատասխան ստացվել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանի 29.01.2019 թվականի թիվ 25/01-Մ-788 գրությունը, ըստ որի՝ **«... երեխաների բնակության վայրը սահմանելու վերաբերյալ դատական գործերով հանձնաժողովի կողմից իրականացվող քննարկումներին հանձնաժողովը մասնակից է դարձնում երեխաների օրինական ներկայացուցիչներին՝ ծնողներին, այլ ոչ թե ծնողների լիազոր ներկայացուցիչներին»:**

Այս կապակցությամբ, թերևս հարկ է նշել, որ Արաբկիր վարչական շրջանում համանման դեպք գրանցվել էր դեռևս 2015 թվականին, որի և այլ առիթների կապակցությամբ 08.12.2015թ. թիվ Ն/1111 գրությամբ տեղեկացրել ենք Երևանի քաղաքապետարանին:

Նշված խնդրի ուսումնասիրության արդյունքում Երևանի քաղաքապետարանի 14.12.2015թ. թիվ 35/65010 գրությամբ **վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նախագահներին խստորեն հանձնարարվել էր ապահովել օրենքների պահանջների կատարումը և չխոչընդոտել փաստաբանների գործունեությանը:**

Ցավոք, խնդիրը կրկին արձանագրվել է, և կրկին Արաբկիր վարչական շրջանում, որի կապակցությամբ ստիպված ենք նորից նշել, որ

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից փաստաբանների նկատմամբ դրսևորվող ցանկացած կամայականություն ուղղակիորեն խոչընդոտում է վերջիններիս գործունեությանը, ինչն անթույլատրելի է:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով իրավական պետություն հռչակված Հայաստանի Հանրապետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել յուրաքանչյուր անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 64):

Վերը նշված իրավունքների արդյունավետ իրագործման, ինչպես նաև իրավունքի գերակայության ապահովման հարցում իր անփոխարինելի դերն ունի փաստաբանությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանվել են փաստաբանական գործունեության երաշխիքներ, մասնավորապես, նույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:**

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պաշտոնատար անձի կողմից փաստաբանի ... լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը դիտվում է որպես քրեորեն պատժելի արարք:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ օրենքը փաստաբանական գործունեությունը դիտում է որպես իրավապաշտպան գործունեություն, որն ուղղված է իր վստահորդի իրավունքներն ու շահերը օրենքով չարգելված եղանակներով և միջոցներով պաշտպանությանը, իսկ փաստաբանական գործունեությանը խոչընդոտելն առաջացնում է համապատասխան իրավական հետևանքներ:

ՀՀ կառավարության 2016 թվականի հունիս 21-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 19-րդ կետով հստակ սահմանված է, որ **հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք:**

Արաբկիրի վարչական շրջանի ղեկավարն այս նորմը մեկնաբանել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի (Նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը) պահանջներն անտեսելով, ինչի արդյունքում խախտել է քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ խոչընդոտելով փաստաբանի մասնագիտական լիազորությունների իրականացմանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ (...)* պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական

և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

Ելնելով վերոգրյալից,

խնդրում ենք՝

- Հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին բացառել փաստաթանների մասնակցությունը խոչընդոտելու դեպքերը:

Կից ներկայացվում է՝

1. Փաստաթան Նելլի Մովսիսյանի 04.02.2019թ. դիմումի պատճենը,
2. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 29.01.2019թ. թիվ 25/01-Մ-788 գրության պատճենը,
3. Երևանի քաղաքապետարանի 14.12.2015թ. թիվ 35/65010 գրության պատճենը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաթանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան